ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2015 թվականի **թիվ 15** քաղ. Մոսկվա

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԳՈՂ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԿԻՏՐՈՆԱԹԹՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՏՈՒՐՔ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 8-րդ հավելված) 107-րդ կետին համապատասխան և Ներքին շուկայի պաշտպանության դեպարտամենտի զեկույցի հիման վրա՝ Եվրասիական տնտեսական միության կոլեգիան **որոշեց.**

1. Կիրառել հակագնագցման միջոց՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից ծագող, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2918 14 000 0 ծածկագրով դասակարգվող, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող կիտրոնաթթվի նկատմամբ հավելվածի համաձայն սահմանված չափով հակագնագցման միջոց կիրառելու միջոցով՝ տվյալ հակագնագցման միջոցի գործողության ժամկետը սահմանելով 5 տարի:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ մաքսային գործի ոլորտում լիազորված պետական մարմիններին՝ ապահովել սույն Որոշմամբ նախատեսված հակագնագցման տուրքի գանձումը՝ ղեկավարվելով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ **Վ. Խրիստենկո**

Հավելված

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի

2015 թվականի մարտի 10-ի թիվ 15 որոշման

Դ Ր Ո Ւ Յ Ք Ա Չ Ա Փ Ե Ր

հակագնագցման տուրքի

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ	Արտադրող	Հակագնագցման տուրքի դրույքաչափ

ծածկագիր		(մաքսային արժեքի տոկոս)
2918 14 000 0	Weifang Ensign Industry Co., Ltd.	4,20
	(№1567, Changsheng street, Changle, Weifang, Shandong province, China)	
	TTCA Co., Ltd.	6,82
	(West, Wenhe Bridge North, Anqiu, Shandong, China и/или No. 27 Xin An Nan Road, Anqiu, Shandong, China)	
	Yixing-Union Biochemical Co., Ltd.	16,97
	(Economic development zone, Yixing, Jiangsu, China)	
	այլ	16,97